

ԳՐԱԳԻՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՍԱՐԱՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

IV դ. նշանավոր մատենագիր Բարսեղ Կեսարացու գործերի հայերեն հին թարգմանությունների հետ կապված խնդիրների քննությունը, թարգմանիչների գործունեության ու թարգմանության հավաստի մանրամասների վերհանումը այսօր էլ հայագիտության համար որոշակի իմաստ ունի: Բնականաբար, իբրև առաջին գնահատություն հասկանալի են ու հիմնավոր Կեսարացի մատենագրի կյանքի ու գործունեության քննության, նրա գործերի հայերեն թարգմանությունների միջնադարյան բնութագրումների վերագնահատման առաջին նախաձեռնումները տակավին XIX դ. առաջին կեսին՝ լինելի դրանք հայերեն թարգմանության բնագրի հրատարակության, առանձին հոդված-քննության, բնագրի այս կամ այն հատվածի համադիր վկայակոչման, բառական բացատրության, ազդեցության բացահայտման կամ, ասենք, տողատակի հղման համառոտ եղանակով:

Նոր հայկազյան բառարանի հեղինակները Կեսարացու գործերի հայերեն թարգմանության առիթով նկատում են. «Այս ամենայն ընդհանրապես են թարգմանութիւնք նախնեաց ի Ե դարու, բայց կան և ի նոսա ինչ ինչ թարգմանեալ ի Զ և ի է դարս տարապալման հելլենաբանութեամբ...»¹: Նույն կարծիքն է պաշտպանում նաև բանասեր Ա. Սուքրյանը՝ թարգմանությունը հատկացնելով այն ժամանակներին, «եբր իմաստնացեալ և իմաստացուցիչ մեր թարգմանիչք ալ ժիրաժիր մեղուաց պէս յԱթէնս, ի Բիւզանդիոն, յԱղեքսանդրիա, ի Կեսարիա կը թեածէին՝ մատենագրութեանց ծաղկունքը ժողովելու»²: Բանասերի «իմաստնացեալ և իմաստացուցիչ» բնորոշումը Մաշտոցի առաջին աշակերտ-թարգմանիչներին է վերաբերում անխտիր, որոնք, հիւրավի, քաղաքից-քաղաք էին անցնում թարգմանական գործը հոգալու նըպատակով:

Հայ թարգմանական գրականության հմուտ հետազոտող Գ. Զարբհանայանը գտնում է, որ Բարսեղ Կեսարացու «ճարտարախօս և իմաստուն երկասիրութեանց ոչ միայն մեծագոյն մասն մը թարգմանուած են ի մեր լեզու, անդստին ի հինգերորդ դարէ...», այլ ջերմեռանդն և սրտագրաւ աղօթից՝ «ատք»՝ անցած են ի կարգս եկեղեցական հասարակաց պաշտամանց»³: Ուսումնասիրողը միաժամանակ ներկայացնում է Կեսարացու հայերեն թարգմանված շուրջ վաթսու անուն աշխատությունների մատենագիտական ցանկը՝ «...թարգմանութեամբ նախնեաց ըստ մեծի մասին յոսկեղէն դարու մեր մատենագրութեան, և այլք կրտսերագոյնք ժամանակաւ...»⁴:

1 Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, Առաջաբան, էջ 10:

2 Ա. Սուքրեան, Ս. Բարսեղ եւ իր երկասիրութիւնքն («Բազմավէպ», 1873, էջ 123):

3 Գ. Զարբհանայան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 259:

4 Նույն տեղում, էջ 325—326:

Անդրադառնալով Կեսարացու Պատարագի հայերեն թարգմանության ժամանակին, Հ. Գաթրճյանը գտնում է, որ վերջինս «...այնպիսի թարգմանութեամբ է մեր ունեցած օրինակներուն մէջ, որ մեր 5-րդ դարուն առաջին կէսին անման լեզուն է»⁵։ Այլ առիթով նա ավելի որոշակի է դարձնում նշված գործի թարգմանության ժամանակը՝ գրելով. «հարկ է նոյն իսկ հայկական դպրութեան անմիջապէս առաջին տարիներուն հանել աս պատարագին հայերէն թարգմանութիւնը»⁶։

Արդ, ո՞րն է հայագետների նմանօրինակ դիտողութիւնների հիմքը, այլ կերպ՝ կա՞ն, արդո՞ք, գրչագիր վկայութիւններ Կեսարացու գործերի հայերեն թարգմանութիւնների մասին։

Քննութիւնը ցույց է տալիս, որ «Վեցօրեայից» հետո Կեսարացու «Գիրք հարցողացը» իր ընդգրկած խնդիրների բազմազանութեամբ ու խորութեամբ առանձնահատուկ տեղ է բռնում հեղինակի մատենագրական ժառանգության մեջ։ Նրա թարգմանության ժամանակի ու հեղինակի մասին պահպանվել է հետևյալ համառոտ վկայութիւնը. «Թարգմանեալ ի յունականէն ի հայս՝ ի ձեռն ծշմարտարանից թարգմանչաց մերոց»⁷։ «Ծշմարտարանից թարգմանչաց» բնորոշումը, հարկավ, վերաբերում է V դ. մեր այն թարգմանիչ-հեղինակներին, որոնք իրենց ուսուցիչների ընկերակցութեամբ ու խորհրդով թարգմանվող մատենագրութիւնն ու թարգմանության արվեստն էին ուսումնասիրում⁸։

Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության զգալի մասի հին թարգմանության մասին է վկայում նաև հետևյալ հաղորդումը. «...իսկ զկանոն Զրարհնէիցն ի Կեսարիա չաղաքէ, զոր արարեալ է սրբոյն Բարսղի յեթն ամի հայրապետութեան իւրոյ եւ զՀայրարհնէսն, յերուաղեմէ Խոսրով եբեր ի Հայս՝ հրամանաւ սրբոյն Սահակայ»⁹։ Հատվածում, նկատելի է,

5 Յ. Գաթրճյան, Սրբազան Պատարագամատոյցը հայոց, Վիեննա, 1897, էջ 89։ Կեսարացու Պատարագի հայկական միջավայրում ունեցած հոգեհարազատության, հօգուտ հին թարգմանության է խոսում նաև այն իրողությունը, որ առանձին գրչագրերում նշված գործի հեղինակ է հիշվում Գր. Լուսավորիչը, մինչդեռ, Գաթրճյանի հավաստմամբ, հունարենում, բնականաբար, առկա է Կեսարացու անունը։

6 Նույն տեղում, էջ 109։ Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության զգալի մասի V դ. թարգմանություն լինելու փաստը զանազան առիթներով նկատել են հայագետներ Կ. Տեր-Մկրտչյանը, Մ. Աբեղյանը, Թ. Ավդալբեգյանը, Ա. Աբրահամյանը, Վ. Զալոյանը և ուրիշներ։ Տե՛ս Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ, Հրատարակութիւն Կարապետ Եպիսկոպոսի, էջմիածին, 1914, էջ XLV, Մ. Աբեղյան, Երկեր, Երևան, 1968, հ. Գ, էջ 110, Թ. Ավդալբեգյան, Հայագիտական հետազոտութիւններ, Երևան, 1969, էջ 126, 127։ Ա. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրութիւնը, Երևան, 1944, էջ 169, В. Чалоян, История армянской философии, Ереван, 1959, стр. 57.

7 Գ. Զարբանալյան, Մատենադարան..., էջ 337։

8 Կա Բ. Կեսարացու նշված գործի հին հայերեն թարգմանությունը հավաստող այլ կովան ևս։ Խոսքը ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) № 1853, 1658, 229 և 146 գրչագրերի մագաղաթյա պահպանակների մասին է, որոնք առանձին թերթեր են «Գիրք հարցողացի» երբեմնի ամբողջական գրչագրերից՝ ընթերցանակված ուղղագիծ և բուրգագիծ երկաթագիր գրչութեամբ։

9 Մատենադարան, ձեռ. № 3260, էջ 179ա։ Գրչագրերում պահպանվել են բերված վկայության այլ խմբագրություններ ևս. «Իսկ զկանոն շրբհնէիցն սուրբ Բարսեղ առարեալ է

խոսքը Կեսարացու նշված կանոնները թարգմանության նպատակով Հայաստան բերելու մասին է: Նույնի մեկ այլ գրչագիր տարբերակում կարդում ենք. «Իսկ ղԿանոն Զուր Սրհնելոյն, զոր ասացեալ էր Տեառն Բարսղի, հինգերորդ ամի հայրապետութեան իւրոյ, ի Կեսարիայ Կապադովկացուց քաղաքի, ի յԵրուսաղէմ հանգիպեցաւ խոսրով Թարգմանիչ, հրամանաւ Սրբոյն Սահակայ, եւ անտի գրեաց եւ երբ ի Հայս»¹⁰: Բովանդակության մանրամասնելով, ինչպես տեսնում ենք, բերված վկայությունը նախորդների հետ նույնական է:

Արձանագրելի տարբերությունը հետևյալն է. նախ՝ նախորդ բերված և հղված թարգմանական տեղեկություններում Կեսարացու նշված կանոնի գրություն ժամանակ է հիշվում հեղինակի հայրապետության յոթերորդ տարին, իսկ այստեղ՝ հինգերորդ: Դա, թերևս, արդյունք է հիմք դրչագրի «է» և «ե» նմանահունչ տառերի հետագա շփոթի, ավելի ճիշտ՝ նույնացման: Ուշադրության է արժանի նույն հատվածի մեկ այլ փրոդություն ևս. անհիմն չի լինի մտածել, որ նախորդ հաղորդումներում օտարված և ներկա հատվածի վերջնամասում առկա գրեալ բառը այս դեպքում ընդօրինակել նշանակությամբ է կիրառված: Արդ՝ որ վկայակոչված հաղորդումը Կեսարացու կանոնները ընդօրինակելու և հայերենի թարգմանելու նպատակով Հայաստան բերելու մասին է, երևում է նաև նրանից, որ գործին հետամուտ անձը Սահակն է, այսինքն նույն փնքը՝ Մաշտոցի օգնականը, թարգմանությամբ պարապող Սահակ Պարթևը, որի ձեռքով կամ խորհրդով հայերենի են թարգմանվել Բարսեղ Կեսարացու շատ գործեր:

Ո՞վ է հիշյալ խոսրով թարգմանիչը, Սահակի և Մաշտոցի աշակերտների թվում կա՞ այդպիսի անձնավորություն: Սահակ Պարթևի պատվերով նշված կանոնախմբերը ընդօրինակելու և թարգմանելու նպատակով Հայաստան բերելու միտքը փնքին ենթադրել է տալիս, որ վերջինս Մաշտոցի աշակերտներից է: Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի թարգմանական գործունեությունը բացահայտող առկա քննությունների մեծ մասում խոսրով անվամբ թարգմանիչ չի արձանագրված¹¹: Այդուամենայնիվ, հիշյալ № 3260 գրչագրում, Կեսարացու կանոնների հայերեն թարգմանության շուրջ պահպանված քննվող տեղեկության անմիջապես ակզբնամասում ասված է, որ Մաշտոցը նաղիանդ է գնում, տրպեսզի այնտեղից բերի «գՍերմապրհնէւրն, ղԿալ և զՀնձան, զոր արարեալ է Աստուածաբանին...»¹², իսկ այնու-

րի՛քն ամի հայրապետութեան իւրոյ, գնացեալ էր յԵրուսաղէմ քաղաք, եւ զի նմա հանգիպեցաւ խոսրով թարգմանիչն երբ ի Հայս, որ երթեալ էր յԵրուսաղէմ հրամանաւ սրբոյն Իսահակայ: (Յուցակ հայերէն ձեռագրաց ս. Նշանի վանուց ի Սեբաստիա, կազմեց՝ Թորգոմ արքեպ. Գ ու շ ա կ ե ա ն, Վիեննա, 1961, էջ 69, հմմտ. Յ. Թորգոմեան, Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 340):

¹⁰ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. 3, կազմեց՝ Ն. Պոգրեան, Երուսաղէմ, 1968, էջ 77:

¹¹ Ն. Ակիսեան, Ս. Մաշտոց վարդապետ, Վիեննա, 1949, էջ 175—198, Գ. Զարբ-հանալեան, Պատմութիւն հայերէն դպրութեանց, Վենետիկ, 1865, էջ 179—193:

¹² Մատենադարան, ձեռ. № 3260, էջ 178բ—179ա: Ի դեպ, Կեսարացու «Արհնեալ է...» աղոթքի հայերեն թարգմանության մասին ասված է. «Աղոթքս որովհետեւ կը պակսի Ա. Մաշտոցին մէջ, եւ Ծառոցին մէջ Բարսղի խորագրուած է, կարծել կու տայ որ ի հնումն թարգմանուած չէր, և հետեւաբար սա իսկ Գրիգոր Վկայասէր թարգմանած եւ ներմուծած ըլլալ: Մաշտոցին մէջ» (Բ. Սարգիսեան, Գ. Սարգսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մատենադարանին Միութեանց, Վենետիկ, 1966, հ. Գ, էջ 85):

հետև վկայվում է հոսսորվի գնալու և Բարսեղի կանոնախմբերը բերելու փաստը: Գրչագրում Մաշտոց, Սահակ հայտնի անունների կողքին թարգմանական միևնույն հարցի առնչությամբ հոսսորվ թարգմանչի անվան հիշատակումն ու գործունեության նույնությունը բավարար հիմք չեն, արդյոք, ենթադրելու, որ նշված հոսսորվը Մաշտոցի և Սահակի աշակերտներից է: Կ. Գանձակեցու Պատմության մեջ Մաշտոցի գրաստեղծման ու ուսուցչական գործունեության հատվածում նույնպես կա խնդրին առնչվող մի կետ. «Որոց վարդապետք և ուսուցիչը՝ սոգրբն Սահակ և Մեսրոպ, և գլխաւորք յաշակերտացն... Մուշէ, Արծան, հոսսորվ, Ղազար, և յետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս...»¹³: Արդ՝ Սահակի և Մաշտոցի բազմաթիվ աշակերտների թվում հիշվում է նաև հոսսորվ, որը, հավանաբար, նույն թարգմանիչ անվանված անձն է: Այլ վկայությունների համաձայն՝ Մաշտոցի և Սահակի աշակերտների՝ Հովսեփ, Ղևոնդ, Նիդիշ, Մովսես, Մամբրե, Նզնակ և այլոց հետ, «որ թարգմանեցին զամենայն զգիրս Յունաց եւ յԱսորոց»¹⁴, հիշվում է նաև հոսսորվ:

Ուսումնասիրողներից Գ. Զարբանալյանը, մեր մատենագրության ըսկրզնավորման շրջանի թարգմանությունների բնույթն ու թարգմանիչների գործունեությունը գնահատելիս, Մաշտոցի և Սահակի երկրորդ աշակերտների շարքում է դասում հիշյալ հոսսորվին, որին «...կրնժայուի դարձեալ Զորհնեաց կանոնին լարգմանութիւնն ի յունէ»¹⁵:

Հարկավ, նշված տեղեկոթյունների թերին կարելի է լրացնել այլուր պահպանված նորորակ հաղորդումներով, բայց բերվածներն էլ բավական են ասելու, որ V դ. Մ. Մաշտոցի և Ս. Պարթևի աշակերտների թվում հիշվում է մի հոսսորվ, որը իր ուսուցիչների ու աշակերտ-ընկերների հետ ըգբաղվել է թարգմանությամբ և, համաձայն Ն 3260 գրչագրի վերոբերյալ տեղեկության, ընդօրինակել ու թերևս թարգմանել է Բարսեղ Կեսարացու նշված երկու կանոնախմբերը¹⁶:

Հաջորդ վկայությունը Կեսարացու «Ի ծնունդ Փրկչին» խորագրով գործի հայերեն թարգմանությանն է վերաբերում: Կեսարացու մատենագրական ժառանգությունն ամփոփող Ն 5595 գրչագրում (ընդօրինակված՝ 1279 թ.) ասված է. «Դաւիթ թարգմանէ Տարաւնացի՝ զճառս զայս յետոյ դարձուց ի յունէն ի հայ բարբառ, ի Դամասկացուց քաղաքին, հրամանաւ Համաղասպայ Կուրապաղատին՝ Մամիկոնեանից տեառն: Եւ եղիցի արհնութիւն տեառն ի վերայ նոցին»¹⁷: Այս բավական հին, տարածված ու տարահիմք գրչա-

13 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց: Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 28:

14 Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին ի Վիեննա, կազմեց Յ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 60, հմմտ. էջ 76:

15 Գ. Զարբանալյան, Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897, էջ 295: Հմմտ. Գ. Յովսէփեան, հոսսորվի թարգմանիչ (Ը դար), Վաղարշապատ, 1899, էջ 28:

16 Այլ հարց է, թե հոսսորվ թարգմանիչը ինչ առնչութիւն ունի Սահակի Վարթի ենթադրվող համանուն հեղինակի հետ: Այդ մասին տե՛ս Փ. Փ. Անթարյան, Սահակ Պարթևի «Վարթի» և նրա հեղինակի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1968, Ն 2, էջ 129—146, Գ. Արգարյան, Դարձյալ Սեբասի մասին («Բանբեր Մատենադարանի», Ն 10, 1971, էջ 452—453, 457—459):

17 Մատենադարան, ձեռ. Ն 5595, էջ 327ա, հմմտ. Մատենադարան, ձեռ. Ն 2549, էջ 177բ, Գ. Զարբանալյան, Մատենադարան..., էջ 329, Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ

դրերում հաճախադեպ հաղորդման մեջ, ինչպես տեսնում ենք, անվանապես հիշված են քննվող գործի թարգմանիչը, թարգմանության վայրն ու մեկե-նասը:

Ստեփանոս Ասողիկը հարգանքով ու գովեստով խոսելով թե՛ Դավիթ Տարոնացու և թե՛ Համադասպ Մամիկոնյանի մասին, նկատում է, որ «...ի խնդրոյ տեսիսի լինի Համադասպ հրամանատար Հայոց ի ՃԴ թուակա-նին»¹⁸, Այս խնդրում հետագա հայագիտական գրականության մեջ եղած աեղեկությունների հիմնական աղբյուրը Ասողիկն է¹⁹:

Բարսեղ Սարգսյանը Կեսարացու նշված ճառի հայերեն թարգմանու-թյան ժամանակ է ընդունում Ասողիկի վկայած նույն 655 թվականը, ըն-րելով միաժամանակ լրացուցիչ պատճառաբանություններ: Նրա իսկ նկա-րագրած № 314 գրչագիրը («Հաւաքումն ճառից ս. Բարսղի, ԻԱ») պարու-նակությամբ, գրչությամբ և մանավանդ Կեսարացու թարգմանչի մասին վկայությամբ շատ է նման ու մոտ Մատենադարանի № № 5595, 2549 ձե-ռագրերին և մայր օրինակի տպավորություն է ստեղծում՝ ընդօրինակված ԺԱ—ԺԲ դարերում: Արդ Բ. Սարգսյանը ենթադրում է, որ վերոբերյալ հի-շատակարանը «...շատ աւելի հին ըլլալու է քան Ձեռագրիս գրիչն, վասն ՚ի սա ԺԲ դարում ապրելով՝ պատեհ չունէր ոչ ճանչնալու զԴավիթ Տարո-նացին և Համադասպ Մամիկոնեանը, և ոչ ալ իր կողմէն յերիպելով զայն հոս զետեղել, հետեաբար՝ ինչպէս գտեր է զայն գրիչն իր նախագաղափա-րին մէջ,— որ ըլլալու է Ա կամ Բ օրինակ Բարսղի ճառերու թարգմանու-թեան սկզբնադոին,— այնպէս ալ արտագրեր է»²⁰:

Ինչպես տեսնում ենք, ուսումնասիրողի լրացուցիչ պատճառաբանու-թյունը հիմնավոր է և փաստարկում է հօգուտ Բարսեղի հին թարգմանու-թյան, մանավանդ երբ, իր իսկ վկայությամբ՝ «թարգմանութեանս լեզուն իսկ ասոր առհաւատչեայ է»: Վկայակոչելով վերոբերյալ հիշատակագրու-թյունը, Ն. Ակինյանը ենթադրում է, որ Դավիթ թարգմանիչը Կեսարացու

550ա, Գ. Զարհանալյան, Հայկական հին դպրություն, էջ 455, Մայր. ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց, հ. Բ, յօրինեաց Բ. Սարգիսեան, Վնենտիկ, 1924, էջ 1262, Լ. Թորոսեան, Համեմատութիւն մը Յովհ. Մանգակունոյ. «Վասն փոխոց եւ վաշխոց» եւ Ս. Բարսղի «Ընդդէմ վաշխողաց» ճառերուն (Երազմավէպ», 1927, էջ 73), Լ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1944, հ. Գ, էջ 17, Ի. Տրիէս-սէն, Ս. Բարսղի հայ ձեռագիրներու հաւաքածոն (Երազմավէպ», 1954, էջ 69, Պ. Տեր-Պողոսեան, Ս. Բարսեղ Կեսարացի եւ իր գրութիւնները հայերէն թարգմանութեամբ (Մանգէս ամսօրեայ, 1568, էջ 412), Ծուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի ամենափըր-կիչ վանքի, հ. Ա, կազմեց Ս. Տէր-Ավետիսեան, Վիեննա, 1970, էջ 592:

18 Ստեփանոսի Տարօնեցու Ասողկան Պատմութիւն տիեզերական, Պետեր-բուրգ, 1885, էջ 99, հմտ. էջ 91:

19 Մ. Զամյանը օգտվելով Ասողիկից՝ Դավիթ Տարոնացու մասին գրում է. «էր ի Բագ-րիանդ գաւառէ ի բագուան գեղջէ՝ հայ ազգաւ՝ այր երևելի յիմաստս փիլիսոփայական գի-տութեան» (Մ. Զամյան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վնենտիկ, 1784, էջ 349): Գ. Զարհ-անալյանի հավաստմամբ՝ «նեսիսի Մինոդ հայրապետին կաթողիկոսութեան օրովը ծաղկած է նաև Դավիթ անունով մէկը՝ Բագրեանդ գաւառին Բագաւան գեղջէն, զոր մեծա-պէս կը դրուատէ Ասողիկ՝ ի մաս տասէր և մեծ փիլիսոփայ կոչելով (Գ. Զարհ-անալյան, Հայկական հին դպրություն, էջ 454): Հմտ. նաև Ղ. Ալիշան, Այրա-րատ, Վնենտիկ, 1890, էջ 530, Լ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երե-վան, 1944, էջ 28:

20 Մայր. ցուցակ, էջ 1262:

նշված ճառը թարգմանելու միտքը ինքը հուշած լինի Համազասպ Մամիկոնյանին: Վեր հետեւի ասկէ, թէ Համազասպ եւ Դաւիթ, երկու ուսումնասէրներ, նստած մէկ սեղանի առաջ խօսակցած են զրական հարցերու շուրջ. իսկ այս տեղի ունեցած է Դամասկոս, ուր եւ թարգմանած է Ճառս Դաւիթ իբր 661/2-ին»²¹, — գրում է նա: Ներկա դեպքում առանձին կարևորութիւն չունի այն հարցը, թե առաջինը ով է հղացել թարգմանութեան միտքը: Հակառակ թարգմանութեան փաստի արձանագրումն ու ժամանակի մոտավոր ճշտումն է: Այդ իմաստով, ինչպես տեսնում ենք, «Ի ծնունդ Փրկչին» ճառի հայերեն թարգմանութիւնը պետք է լինի 655—661 թթ. ընթացքում՝ Դավիթ Տարոնացու ձեռքով:

Ք 5595 ձեռագրում առկա «յետոյ դարձոյց ի յունէն ի հայ բարբառ» միտքը, որը դիտելի է իբրեւ թարգմանչի գործունեութեան հարակից տեղեկութիւն, Գ. Զարրհանալլանին հիմք է տվել գրելու. «...ըսել կուզէ թէ մէկականերն կամ շատերն առաջուց թարգմանութեան էին»²², նման պատճառաբանութեան պարագայում պետք է ընդունել, որ նախ՝ Դավիթ Տարոնացու թարգմանութիւնն է միայն նշված գործը և ապա՝ Բարսեղի ճառերը հակառակ մասով կամ ամբողջութեամբ «առաջուց», այսինքն՝ V դ. էին թարգմանվել հայերենի:

Գ. Զարրհանալլանի այդ նույն բացատրութեան շուրջ ժամանակին հայագիտութեան մեջ հարցվել է. «Բայց այդ խօսքերով կարելի չէ՞ նաև հասկնալ, թէ յիշեալ Դաւիթը նախապէս թարգմանած ըլլալով Ս. Բարսեղին ճառերը Բիւզանդիոնի կամ Հայաստանի մէջ, «յետոյ» Դամասկոսի մէջ թարգմանած ըլլալ «Ի ծնունդ Փրկչին» ճառը»²³:

Կեսարացու գործերի, այդ թվում նաև ճառերի մեծ մասի հին հայերեն թարգմանութիւնը հայագիտութեանը հայտնի իրողութիւն է: Բայց, այդուհանդերձ, մատենագրական վկայութիւններ կան այն մասին, որ Դավիթ Տարոնացին թարգմանել է Կեսարացու նաև այլ գործեր²⁴:

Ք 4150 գրչագիրը Աստվածաբանի, Կեսարացու, Նյուսացու և այլոց գործերի մեկնութիւն-ժողովածու է, որտեղ Կեսարացու «Վասն հարցման Բարսղի առ Ապողինար» աշխատութեան հայերեն թարգմանութեան մասին ասված է. «...թարգմանեցաւ ճառս ի Դաւթէ թարգմանչէ և եղաւ յայսր մատենի»²⁵: Համեմատելով այս և նախորդ ձեռագիր վկայութիւնները որոշակի է դառնում, որ խոսքը միևնույն թարգմանչի մասին է՝ «Դաւիթ թարգման», «Դաւթէ թարգմանչէ» միանման բնորոշումներով: Նշանակում է հիմք

21 Ն. Ա. Կ. Ի. Ե. Ե. Ե., Դաւիթ Զարբացի Անյաղթ փիլիսոփայ, Վիեննա, 1959, էջ 78:

22 Գ. Զարրհանալլան, Հայկական հին դպրութիւն, էջ 455:

23 Զ. Ք. Ք. Ք. Ք. Ք., նշվ. աշխ., էջ 73:

24 Այս առումով ուշագրավ է հետևյալը. Կեսարացու նշված գործի հայերեն թարգմանութեան վերոբերյալ հիշատակարանն ընթերցելիս աղբյուրագետ-բանասէր Տրիստենի մոտ արդարացիորեն հարց է առաջացել. այն միայն նշված ճառի՞ն է վերապահելի, թե՞ «Գիրք պահոցի» հայերեն թարգմանութիւն-խմբագրութեան առհասարակ, մանավանդ որ «Գիրք պահոցի» վերջնական խմբագրումը նույն ճառի թվագիր թարգմանութեան է զուգադիպում: (Տե՛ս Ի. Տրիստեն, նշվ. աշխ., էջ 69):

25 Մատենադարան, ձեռ. Ք 4150, էջ 76ա: Գ. Զարրհանալլանը Կեսարացու այս «Զարցումի» հայերենը բնութագրում է «հին թարգմանութիւն» արտահայտութեամբ: (Տե՛ս Գ. Զարրհանալլան, Մատենադարան..., էջ 330):

կա ենթադրելու, որ գործ ունենք Դավիթ Տարոնացու մեկ այլ թարգմանության հետ՝ կատարված հավանաբար հիշյալ 655 թ.:

Ավելին, № 437 գրչագրում պահպանվել է մի հիշատակություն, որը հնարավորություն է տալիս մտածելու, թե նույն Դավիթ Տարոնացին զբաղվել է Բարսեղ Կեսարացու ճառերի ոչ միայն թարգմանությամբ, այլև նրա մատենագրական ժառանգության զգալի մասի մեկնությամբ: Նշված գրչագրում ասված է. «Տեսառն Յակոբայ հայոց կաթողիկոսի՝ լուծմունք գրենացն Բարսղի, գոր տեղեկացեալ է Դաւիթ վարդապետէ...»²⁶, Զեռագրական տեղեկություններ կան այն մասին, որ հայոց Հակոբ կաթողիկոսը (1268—1286) լավածանոթ է եղել Կեսարացու մատենագրական ժառանգությանը և զբաղվել է դրա մեկնությամբ: Ահա Կեսարացուն բնորոշող նրա բնութագրումներից մեկը. «Ծրանելի վարդապետս զանազան վարդապետութեամբ խրատէր դիւր հօտացեալ հօտն ի հնոց և ի նորոց կտակարանաց և կազմէր նոցա դեղ հոգեկորական առ ի բուժել զախտս բազմատեսակս յունակացեալս ի նոսա»²⁷, Նախորդ վկայությունը միաժամանակ հուշում է այն միտքը, որ Հակոբ կաթողիկոսը տեղեկացել է (իմա՝ կարդացել-ծանոթացել է) Կեսարացու թարգմանիչ Դավիթ թարգմանչի գործերը:

Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների հետ կապված տեղեկությունները չեն ավարտվում դրանցով: Վկայություն կա, որ նրա «Վասն պահոց» գործը թարգմանվել է «ի յունականէն ի հայ՝ Վ Ստեփանոսէ քահանայէ և յետին կրօնաւորէ»²⁸, Հավանաբար նույն Ստեփանոսին է վերապահվել նաև Բարսեղ Կեսարացու «Յաղագս ձայնից» երկասիրության հայերեն թարգմանության մասին պահպանված հետևյալ տեղեկությունը. «Բարսղի Յաղագս ձայնից... գոր թարգմանեաց Ստեփանոս Փիլիսոփոս»²⁹: Այս վկայության վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել և բուն գործը դիտական շրջանառության մեջ դրել Կոմիտասը՝ տալով նյութի հայտնության հետևյալ բացատրությունը. «Պատահաբար մեր ձեռքն անցաւ մի ձեռագիր, որի մէջ ապրել էր մի անյայտ գրչի գործից մի գրութի բան «Յաղագս ձայնից թէ ուստի դուստ» վերտառությամբ, բոլորովին անկախ գրքի բուն նիւթից: Այս կտորը բաւական շահաւէտ տեղեկութիւններ է հաղորդում, որոնցից մէկն է և ոմն Ստեփաննոս փիլիսոփայ երաժշտի մասին: Մեր կարծիքով Հ. Ղ. Արիշանի

²⁶ Մատենադարան, ձեռ. № 437, էջ 295ա:

²⁷ Նույն տեղում, էջ 320ա:

²⁸ Դ. Զարրհանալյան, Մատենադարան..., էջ 335, հմմտ. «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 409: Ի դեպ, բերված արտահայտության հետ ունեցած նույնությունը և մասնավորաբար գործում հիշատակված լինելու իրողությունը հիմք են տալիս մտածելու, որ ստորև բերվող վկայության Ստեփանոսը Բարսեղ Կեսարացու «Յաղագս ողորմածութեան...» թարգմանիչն է և ոչ թե գրիչը: Ահա այն. «Կատարեցաւ պայման գրոցս այսոցիկ՝ Ասացուածք Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կապողկացոց, ի ձեռն Ստեփաննոս քահանայի եւ յետին կրանաւորի» (Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ..., էջ 592):

²⁹ Հ. Տաշյան, Ցուցակ..., էջ 1068, Ս. Սողոմոնեան, Հայոց եկեղեցական եղանակները («Արարատ», 1894, № 8, էջ 256), Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. Բ, կաղմբեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1967, էջ 620, հմմտ. հ. Դ, էջ 487, Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ, էջ 580, Հ. Աճառյան, Նշվ. աշխ., էջ 611: Ն. Թահմիզյան, Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության (տե՛ս ՆՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 1, էջ 54):

յիշած Ստեփաննոս երաժիշտը նույն փնջն այս անձն է, բայց ո՛չ թէ յօրինել է յիշեալ քսան և վեց եղանակը, այլ թարգմանել է երանելի Բարսեղ գրութիւնից»³⁰:

Հետագա հետազոտութիւնները այս խնդրում հաշտ են մեծ երգահանի գրառման հետ. «Այս երկասիրութիւնը (իմա՝ Յաղագս ձայնից—Կ. Մ.) յիշաւի կը պատկանի «տեառն Բարսեղի», որ կրնայ Բարսեղ Կեսարացի հայրապետը (Դ դար) ըլլալ: Ստեփանոս փիլիսոփա միայն թարգմանած է զայն»³¹:

Առկա տարակարծութիւնը Ստեփանոս թարգմանչի ով լինելուն է վերաբերվում: Կարծիք կա, որ դա նույն VIII դ. մատենագիր Ստեփանոս Սյունեցին է³², «սակայն գրութեանն լեզուն այնքան հնութեան ղրոշմ չունի, եւ առաւել հաւանօրէն միջնադարեան յետին շրջանի թարգմանութիւն մըն է»³³:

Հայ մատենագրութեանը Ստեփանոս անվամբ հայտնի են տարբեր դրերում գործած բազմաթիվ մատենագիրներ, որոնցից շատերը միաժամանակ զբաղվել են թարգմանութեամբ³⁴: Արդ, տ՛ր դարի մատենագիր է Բարսեղ Կեսարացու նշված գործի թարգմանիչ Ստեփանոսը և ինչ առնչութիւն ունի «Վասն պահոցի» թարգմանիչ Ստեփանոսի հետ:

Հիմքեր վան ենթադրելու, որ Բարսեղ Կեսարացու «Վասն պահոց», «Յաղագս ձայնից» և այլ գործերի վերևում հիշված թարգմանիչը VIII դ. նշանավոր մատենագիր Ստեփանոս Սյունեցին է, որի պատրաստվածութեան, գործունեութեան, մատենագրական վաստակի ու թարգմանական հմտութեան մասին արտակարգ հիացմունքով է խոսում Ստեփանոս Օրբելյանը³⁵:

Որո՞նք են այդ հիմքերը:

ա) Հայտնի է, որ Ստեփանոս Սյունեցին, Սյունիքի դպրոցից հետո ուսումնառութեան նպատակով եղել է Դվինում, Կ. Պոլսում, Հռոմում, Աթենքում և այլուր, շփվել նշանավոր գիտնականների հետ, օգտվել համբավվոր դրաղարաններից ու նշանավոր վարդապետների գործերից: Նա տիրապետել է հունարենին ու լատիներենին և Աթենքում եղած ժամանակ պարապել թարգմանութեամբ³⁶:

բ) Սյունեցին գիտեր հունական դասական մատենագրութիւնը և հա-

³⁰ Ս. Ս ո ղ ո մ ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 222:

³¹ Մ. Գ Ր Ի Գ Ր Ե Կ Ա Ն, Եջգումներ եւ յանելուածք Ստեփանոս Իմաստասէր Սիւնեցոց կենսագրութեան եւ գրութեանց մասին («Հանդէս ամսօրեայ», 1966, էջ 449):

³² Ռ. Ա Յ Ե Յ Յ Մ Յ Ա Ն, Հայկական խաղային նոտագրութիւնը, Երևան, 1959, էջ 74: Այստեղ այդ կարծիքի հեղինակ է հիշվում Կոմիտասը, որը, հարկավ, ճիշտ չէ:

³³ Մ. Գ Ր Ի Գ Ր Յ Մ Յ Ա Ն, նշվ. աշխ., էջ 448—449:

³⁴ ՏԵՄ Զ. Ա Ճ Ա Ռ Յ Ա Ն, նշվ. աշխ., էջ 600—679:

³⁵ Պատմութեան նահանգին Սիսական, արարեալ Ստեփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեացի, Թիֆլիս, 1910, էջ 134—139, 144, 332 և այլն:

³⁶ Գ. Զ Ա Ր Բ Ն Ա Ն Ա Ն, Հայկական հին դպրութիւն, էջ 489—491, Մ. Գ Ր Ի Գ Ր Ե Կ Ա Ն, Ստեփանոս Սիւնեցի, Պէյրութ-Լիբանան, 1958, էջ 13—21, Ա. Ե Ր Ե Մ Յ Ա Ն, Միջնադարյան հայ կոմպոզիտորներ (տե՛ս «Էջմիածին», 1946, № 1, էջ 47):

ւերների է թարգմանել մի շարք գործեր, որոնց թվում նաև «...զգիրսն բաղցրարան Գրիգորի նիւսացոյ զընութեան և զկազմութեան»³⁷:

գ) Սա. Օրբելւանի վկայության համաձայն՝ Սյունեցին արքեպիսկոպոսության տարիներին, ի թիվս այլ բարեփոխումների, վերանայել է նաև հայոց եկեղեցական երգասացության ընդունված կարգը³⁸:

Այսպիսով, բերված տեղեկությունները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ Կեսարացու «Վասն պահոց» և «Յաղագս ձայնից» գործերի վերևում որպես թարգմանիչ հիշված Ստեփանոսը միևնույն անձն է՝ Օրբելյանի վկայած Ստեփանոս Սյունեցի մատենագիրը, որը բազմակողմանի պատրաստվածություն ուներ (այդ թվում նաև երաժշտական), անպայման ծանոթ էր Կեսարացու մատենագրությանը, պարապել է թարգմանություններ և, ասվեց, թարգմանել է Բարսեղ Կեսարացու մեկ այլ ժամանակակցի՝ Գրիգոր Նյուսացու գլխավոր գործը:

Վկայակոչված անուններով, հարկավ, չի սահմանափակվում Կեսարացու գործերի թարգմանիչների ցանկը: Այլուր եղած ձեռագրական հավաքածոների ուսումնասիրության կամ նկարագրության ժամանակ, անշուշտ, երևան կգան հնորյա նորանուններ թարգմանիչներ ու նոր թարգմանություններ:

РУКОПИСНЫЕ ДАННЫЕ ОБ АРМЯНСКИХ ПЕРЕВОДАХ ТРУДОВ КЕСАРИЙСКОГО

К. М. МУРАДЯН

Резюме

В арменистике давно уже установлено, что значительная часть литературного наследия Василия Кесарийского («Книга вопрошающих», «Каноны», «Литургия», помилии и проповеди), переведена на армянский язык еще в V в.

Исследование показывает, что переводчиками некоторых его сочинений являлись ученик Саака Парфянина и Месропа Маштоца Хосров (V в.) и ближайший сподвижник Амазаспа Мамиконяна Давид (VII в.), именуемые «переводчиками-толкователями».

Занимался переводами В. Кесарийского и Стефан Сюнийский (VIII в.).

На основании литературных первоисточников мы попробовали внести, по возможности, ясность в периодизацию переводов.

В древнеармянской литературе были популярны не только сочинения Кесарийского, но и сам автор, часто сталкивавшийся в своей деятельности с армянами. Вероятно, не будет преувеличением сказать, что в этом отношении Кесарийский не имеет себе равных.

³⁷ Պատմութիւն նահանգին Սիւսական, էջ 135, հմտ. Գ. Զարգանաշյան, Մաննադարան..., էջ 371, Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 32:

³⁸ Պատմութիւն նահանգին Սիւսական, էջ 138—139: